

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
N ՀՀՔԿ-ՀՐՄԱՇՁԲ-22/3

ք. Երևան

«19» 10 2022թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «ԿԱՊԻՏԱԼ ՇԻՆ ՔՈՆՍՏՐԱԿՇՆ» ՍՊԸ-ն (Գործընկեր-1) ի դեմս տնօրեն Հ. Կարապետյանի և «Բիդեք» ՍՊԸ-ն (Գործընկեր-2) ի դեմս տնօրեն Գ. Ավետիսյանի (այսուհետ՝ երկուսը միասին Կապալառու), որոնք գործում են ընկերությունների կանոնադրությունների և միմյանց միջև 30.08.2022թ. կնքված համատեղ գործունեության պայմանագրի հիման վրա, մյուս կողմից (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին:

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված «Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ» ՊՈԱԿ-ի մասնաշենքերի հիմնանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Աշխատանքի ողջ ծավալով կատարման ժամկետ է սահմանվում 730 օրացուցային օր, որից ծանրամարտի և բռնցքամարտի մասնաշենքերի հիմնանորոգման աշխատանքների համար՝ 365 օրացուցային օր,

ընթացմարտի մասնաշենքի հիմնանորոգման աշխատանքների համար՝ 365 օրացուցային օր: Ընդ որում, ընթացմարտի մասնաշենքի հիմնանորոգման աշխատանքների սկիզբ է համարվում ծանրամարտի և բռնցքամարտի մասնաշենքերի հիմնանորոգման աշխատանքներն ավարտելուց հետո:

Պայմանագրով նախատեսված աշխատանքի սկիզբը համարվում է կապալառուին օբյեկտը հանձնելու վերաբերյալ գրության հաջորդող աշխատանքային օրը՝ պայմանով, որ առկա են տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման համապատասխան պայմանագրերը /համաձայնագրերը/ և շինարարության թույլտվությունը:

Աշխատանքի կատարման երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից յուրաքանչյուր մասնաշենքն ընդունելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը:

1.3.1 Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

1.3.2 Պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետների մեջ չեն հաշվարկվում.

1.3.2.1 հեղինակային և/կամ տեխնիկական հսկողության պայմանագրերի լուծման դեպքում՝ պայմանագրերի լուծման օրվանից մինչև նոր պայմանագրերի կնքմանը հաջորդող օրն ընկած ժամանակահատվածը,

1.3.2.2 շինարարական աշխատանքների կատարումն անհնարին դառնալու օրվանից մինչև դրանց վերսկսելու օրն ընկած ժամանակահատվածը, որն արձանագրվում է տեխնիկական և հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպությունների առաջարկության հիման վրա՝ պատասխանատու ստորաբաժանման կողմից տրված եզրակացությամբ:

### 2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

### 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

#### 3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով:

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

#### 3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով:

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին:

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք:

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

#### 3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

#### 3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի 5 Հավելվածում (Աղյուսակներ N 1 և N 2):

3.4.10 Շինարարական աշխատանքների կատարման ամբողջ ընթացքում շինարարական օբյեկտի տարածքը համալրի տեսախցիկներով, որոնք պետք է շուրջօրյա տեսանկարահանեն ամբողջ շինարարական հրապարակը՝ ընդգրկելով կառուցվող բոլոր տեսակի շինությունները **առնվազն արտաքին բոլոր կողմերից**, և այդ տեսախցիկներին հասանելիություն ապահովվի ինչպես պատվիրատուի, այնպես էլ պատվիրատուի նշած օգտատերերի համար: Սույն կետի խախտման դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի ընդհանուր գնի 0.1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

#### **4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և

պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն: Ընդ որում՝ վերջին վճարման կատարողականի գումարը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 581 241 030 (հինգ հարյուր ութսունմեկ միլիոն երկու հարյուր քառասունմեկ հազար երեսուն) ՀՀ դրամ, որից 484 367 525 (չորս հարյուր ութսունչորս միլիոն երեք հարյուր վաթսուներեք հազար հինգ հարյուր քսանհինգ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի պայմանագրում նշված հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

6.6 Տույժի հաշվարկման հիմքում ընկած աշխատանքային օրերի մեջ չեն ներառվում կատարողական ակտում արտացոլված ժամանակահատվածի վերջին օրվանից մինչև կատարողական փաստաթղթերը Պատվիրատուին հանձնելու ամսաթիվն ընկած մինչև հինգ աշխատանքային օրը, որը տրվում է Կապալառուին՝ տվյալ փուլի աշխատանքներն ավարտելուց հետո կատարողական փաստաթղթերը կազմելու և աշխատանքները տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպության կողմից հաստատվելու հետ կապված գործողությունները պատշաճ կերպով իրականացնելու համար:

6.7 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.8 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառու ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով: Պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

8.7 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի ձեռքբերման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով (անհրաժեշտության դեպքում երաշխիքի ձևով ներկայացրած ապահովման ժամկետի երկարաձգումը հավաստող փաստաթղթի առկայությամբ):

8.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.10 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.11 Պայմանագրի վավերապայմաններում Կատարողի կողմից նշված բանկային տվյալները պետք է համապատասխանեն միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով պայմանագրի և/կամ որակավորման ապահովումների և դրանց կից վճարման պահանջագրերի բանկային տվյալներին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 7 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4, N 4.1 և N 5 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի

քանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

**9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝**

ՀՀ քաղաքաշինության կոմիտե  
ք. Երևան, Հանրապետության հրապարակ  
կառավարական տուն 3  
ՀՀ ֆինանսների նախարարության  
աշխատակազմի գործառնական վարչություն  
Հ/Հ 900011040186  
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝



Ա. Սկրուչյան

Կ.Տ.

**ԿԱՊԱԼԱՌՈՒ՝**

**Գործընկեր-1**

«ԿԱՊԻՏԱԼ ՇԻՆ ՔՈՆՍՏՐԱԿՇՆ» ՍՊԸ  
Գործ. հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Սասունցի Դավիթ փող. 79  
«Ամերիաբանկ» ՓԲԸ  
Հ/Հ 1570070943430100  
ՀՎՀՀ 00494982

Ստորագրողն՝



Հ. Կարապետյան

Կ.Տ.

**Գործընկեր-2**

«ԻՆԵՔ» ՍՊԸ  
Գործ. հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Սասունցի Դավիթ 87ա  
«Ամերիաբանկ» ՓԲԸ  
Հ/Հ 1570015559920100  
ՀՎՀՀ 00450801

Ստորագրողն՝



Գ. Ավետիսյան

Կ.Տ.

«ԵՐԵՎԱՆԻ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՀԵՐԹԱՓՈԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՔՈՒԵՁ» ՊՈԱԿ-Ի ՄԱՍՆԱՇՆՔԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ					
ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ					
Գ/Գ	Աշխատանքների անվանումը	Չափ. միավորը	Քանակը	Միավորի արժեքը	Ընդամենը
1	2	3	4	5	6
<b>Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ</b>					
<b>Ըմբռամարտի մասնաշենք</b>					
<b>1.Քանդման աշխատանքներ</b>					
1	Մետալոպլաստե դռների ապամոնտաժում	մ2	92.00	2,000	184,000
2	Մետալոպլաստե պատուհանների ապամոնտաժում	մ2	228.00	2,500	570,000
3	Ծածկի սալի քանդում	մ <sup>3</sup>	3.0	25,000	75,000
4	Առաստաղի ապամոնտաժում	մ2	437.0	750	327,750
5	Հարթակների և աստիճանների ապամոնտաժում	մ2	169.0	900	152,100
6	Պատերի և բաժանարարների քանդում -744մ2	մ <sup>3</sup>	120.1	9,000	1,080,900
7	Դահլիճի տանիքի ծածկույթի ապամոնտաժում	մ2	1654.0	200	330,800
8	Կավարամածի և տախտակամածի քանդում	մ <sup>3</sup>	6.8	20,000	136,680
9	Մուտքի կենցաղսպասարկման շենքի տանիքի քանդում	մ2	288.0	250	72,000
10	Շին. աղբի բարձում և տեղափոխում 13կմ հեռ.վրա	տ	455.0	3,400	1,547,000
	<b>Ընդամենը՝ քանդման աշխատանքներ</b>				<b>4,476,230</b>
<b>2. Շինարարական աշխատանքներ</b>					
11	Խճով տոփանկած գրունտ	մ <sup>3</sup>	287.0	400	114,800
12	Անցքերի շաղափում պատերի մեջ Φ20 L=450մմ	տեղ	124	600	74,400
13	Անցքերի շաղափում պատերի մեջ Φ20 L=300մմ	տեղ	50	500	25,000
14	Պոլիմերշաղախի ներարկում	մ <sup>3</sup>	0.029	200,000	5,800
15	Դյուբել Φ8, L=20մմ-1240հատ	տ	0.010	2,000,000	20,000
16	Հիդրոմեկուսիչ շերտի իրականացում 1 շերտ իզոգամով	մ2	167.0	2,200	367,400
17	Մոնոլիտ ե/բետոնե հատակի սալ B20 դասի բետոնով	մ <sup>3</sup>	140.0	60,000	8,400,000
18	Φ 5 Br-I ցանցի իրականացում	տ	3.080	700,000	2,156,000
19	Միածույլ ե/բ հենապատ B20 դասի բետոնով	մ <sup>3</sup>	42.0	70,000	2,940,000
20	Բացվածքներ Բ-1, Բ-2	մ <sup>3</sup>	0.950	80,000	76,000
21	Ամրան A I դասի	տ	0.124	540,000	66,960
22	Մետաղական տարեր, անկյունակ, շերտապողպատ, շվեյտ	տ	1.064	850,000	904,400
23	Նախապատրաստական շերտի իրականացում հիմքերի տակ B7.5 դասի բետոնով	մ <sup>3</sup>	3.5	40,000	140,000

1	2	3	4	5	6
24	Շքամուտքի բետոնե հիմքեր B25 դասի բետոնով	մ <sup>3</sup>	12.5	85,000	1,062,500
25	Ամրան A I դասի	տ	0.214	540,000	115,560
26	Ամրան A III դասի	տ	0.523	440,000	230,120
27	Շքամուտքի ե/բ ծածկ B25 դասի բետոնով	մ <sup>3</sup>	21.0	85,000	1,785,000
28	Ամրան A I դասի	տ	0.154	540,000	83,160
29	Ամրան A III դասի	տ	4.226	440,000	1,859,440
30	Միաձույլ ե/բ պատ B25 դասի բետոնով	մ <sup>3</sup>	33.5	98,000	3,283,000
31	Ամրան A I դասի	տ	0.632	540,000	341,280
32	Ամրան A III դասի	տ	2.490	440,000	1,095,600
33	Միաձույլ ե/բ քիվապատ B25 դասի բետոնով	մ <sup>3</sup>	5.5	100,000	550,000
34	Ամրան A I դասի	տ	0.066	540,000	35,640
35	Ամրան A III դասի	տ	0.330	440,000	145,200
36	Մետաղական կախովի պատժգամների իրականացում	տ	3.21	900,000	2,891,700
37	Տրիբունաների և կախովի պատժգամների համար փափուկ տրոսուլների իրականացում	մ <sup>3</sup>	99.50	250,000	24,875,000
38	Ներդիր էլեմենտներ	տ	0.432	900,000	388,800
39	Մոնտաժային փրփուր 20մմ	մ <sup>2</sup>	35.5	1,500	53,250
40	Միջնորմներում բետոնի իրականացում B20 դասի բետոնով	մ <sup>3</sup>	1.0	50,000	50,000
41	Ամրան A I դասի	տ	0.231	540,000	124,740
42	Ամրան A III դասի	տ	0.879	440,000	386,760
43	Մետաղական տարեր, շերտապողպատ	տ	0.588	900,000	529,200
	<b>Ընդամենը՝ շինարարական աշխատանքներ</b>				55,176,710

### 3. Ճարտարապետական մաս

	Դռներ, պատուհաններ				
44	Այլումինե պրոֆիլներով արտաքին դուռներ ջերմակամրջակով (ներառյալ օժանդակ կցամասերը)	մ <sup>2</sup>	8.21	98,000	804,580
45	ՄԻՖ-ից ներքին դուռներ (ներառյալ օժանդակ կցամասերը)	մ <sup>2</sup>	52.76	45,000	2,374,200
46	Մետալպլաստե դռներ սանհանգույցի	մ <sup>2</sup>	4.41	45,000	198,450
47	Փական, արտակարգ իրավիճակում բացվող	հատ	2	15,000	30,000
48	Դահլիճի բաժանման շարժական սահող միջնորմի իրականացում (ներառյալ օժանդակ կցամասերը)	մ <sup>2</sup>	43.83	120,000	5,259,000
49	Այլումինե պրոֆիլներով պատուհան, (բացվող ներառյալ օժանդակ կցամասերը)	մ <sup>2</sup>	184.60	74,000	13,660,400
50	Այլումինե պրոֆիլներով պատուհան, (չբացվող ներառյալ օժանդակ կցամասերը)	մ <sup>2</sup>	70.60	64,000	4,518,400
	<b>Հատակներ</b>				
	<b>1-ին հարկ</b>				
51	Զրամեկուսիչ շերտի իրականացում երկշերտ բիտումի մածիկով	մ <sup>2</sup>	184.41	1,500	276,615

« 19 » 10

2022թ. կնքված N ՀՀԶԿ-ՀԲՄԱՇՁԲ-22/3 գնման պայմանագրի

1	2	3	4	5	6
52	Ջերմամեկուսիչ-էքստրուդացված փրփրապոլիստիրոլ 50մմ	Մ2	184.41	5,500	1,014,255
53	Ցեմենտավազային հարթեցնող d=30մմ շերտի պատրաստում հատակների տակ	Մ2	184.41	2,000	368,820
54	Կերամոգրանիտե 8մմ սալիկների իրականացում, ամրացված սոսնձով	Մ2	184.41	12,000	2,212,920
55	Ջրամեկուսիչ շերտի իրականացում երկշերտ բիտումի մածիկով	Մ2	62.46	1,500	93,690
56	Ջերմամեկուսիչ-էքստրուդացված փրփրապոլիստիրոլ 50մմ	Մ2	62.46	5,500	343,530
57	Ցեմենտավազային հարթեցնող d=30մմ շերտի պատրաստում հատակների տակ	Մ2	62.46	2,000	124,920
58	Ռետինե սպորտային հատակ 8մմ հաստությամբ ներառյալ օժանդակ կյուբերը	Մ2	62.5	20,000	1,249,200
59	Ջրամեկուսիչ շերտի իրականացում երկշերտ բիտումի մածիկով	Մ2	8.90	1,500	13,350
60	Ջերմամեկուսիչ-էքստրուդացված փրփրապոլիստիրոլ 50մմ	Մ2	8.90	5,500	48,950
61	Ցեմենտավազային հարթեցնող d=30մմ շերտի պատրաստում հատակների տակ	Մ2	8.90	2,000	17,800
62	Գոլորշամեկուսիչ 1 շերտ	Մ2	8.90	1,500	13,350
63	Տախտակե հատակի երեսապատում 20մմ հաստությամբ	Մ2	8.90	8,000	71,200
	<b>2-րդ հարկ</b>				
64	Ցեմենտավազային հարթեցնող d=30մմ շերտի պատրաստում հատակների տակ	Մ2	266.51	2,000	533,020
65	Կերամոգրանիտե 8մմ սալիկների իրականացում, ամրացված սոսնձով	Մ2	266.51	12,000	3,198,120
66	Ջրամեկուսիչ շերտի իրականացում երկշերտ բիտումի մածիկով	Մ2	578.30	1,500	867,450
67	Ցեմենտավազային հարթեցնող d=30մմ շերտի պատրաստում հատակների տակ	Մ2	578.30	2,000	1,156,600
68	Ռետինե սպորտային հատակ 8մմ հաստությամբ ներառյալ օժանդակ կյուբերը	Մ2	578.3	13,800	7,980,540
69	Տախտակե հատակի երեսապատում 50մմ հաստությամբ	Մ2	110.03	15,000	1,650,450
	<b>Ներքին հարդարման աշխատանքներ</b>				
70	Գիպսաստվարաթղթեից առաստղի իրականացում 12,5մմ, մետաղական պրոֆիլի վրա	Մ2	390.3	7,000	2,732,310
71	Առաստաղի ծեփամածկում և ակրիլային ներկում	Մ2	390.30	2,000	780,600
72	Ջրակայուն գիպսաստվարաթղթեից առաստղի իրականացում 12,5մմ, մետաղական պրոֆիլի վրա	Մ2	67.7	7,500	507,375
73	Առաստաղի ծեփամածկում և ներկում ակրիլ ներկով	Մ2	67.65	2,000	135,300
74	Ջերմամեկուսացում այլումինե փայլաթիթեղով պատված հանքաբամբակով 50մմ հաստ	Մ <sup>3</sup>	0.4	50,000	19,500
75	Գոլորշամեկուսիչ թաղանթի իրականացում	Մ2	7.73	1,500	11,595
76	Առաստաղի փայտե երեսապատում	Մ2	7.73	20,000	154,600

« 19 » 10

2022թ. կնքված N ԳՅԿ-ԳԲՄԱԸՁԲ-22/3 գնման պայմանագրի

1	2	3	4	5	6
77	Պատերի լավորակ գաջե սվաղում	մ <sup>2</sup>	636.57	2,400	1,527,768
78	Գոլորշամեկուսիչ թաղանթի իրականացում	մ <sup>2</sup>	30.16	1,500	45,240
79	Պատերի ծեփամածկում և ներկում ակրիլ ներկով	մ <sup>2</sup>	636.57	1,800	1,145,826
80	Ջերմամեկուսացում այլումինե փայլաթիթեղով պատված հանքաքամքակով 50մմ հաստ	մ <sup>3</sup>	1.5	50,000	74,500
81	Փայտե չորսու 50x50մմ	մ <sup>2</sup>	30.16	12,500	377,000
82	Պատերի երեսապատում լավորակ կերամիկական սալիկներով	մ <sup>2</sup>	345.22	9,000	3,106,980
83	Պատերի սվաղում ցեմ/ավազային սվաղով	մ <sup>2</sup>	345.22	1,800	621,396
84	Փայլաթիթեղի իրականացում	մ <sup>2</sup>	30.16	3,000	90,480
85	Փայտե երեսապատում	մ <sup>2</sup>	30.16	15,000	452,400
86	Միջնորմների իրականացում h=100մմ հաստ պեմզաբլոկով	մ <sup>2</sup>	55.1	3,600	198,288
87	Միջնորմների իրականացում h=150մմ հաստ պեմզաբլոկով-462,87	մ <sup>3</sup>	69.44	26,000	1,805,440
	<b>Արտաքին հարդարում</b>				
88	Պատերի գաջե սվաղում	մ <sup>2</sup>	1257.24	2,400	3,017,376
89	Պատերի ծեփամածկում և ներկում ակրիլ ներկով	մ <sup>2</sup>	1257.2	1,800	2,263,032
90	Պատերի ծեփամածկում և ներկում ջրակայուն ներկով	մ <sup>2</sup>	716.4	1,500	1,074,630
91	Արտաքին պատերի երեսապատում ջերմամեկուսիչ կյուբով (էքստրուդացված փրփրապոլիստիրոլ)	մ <sup>2</sup>	202.0	6,000	1,211,760
92	Արտաքին պատերի ցեմենտավազային սվաղ	մ <sup>2</sup>	458.4	2,000	916,800
93	Մետաղական ցանցի իրականացում	մ <sup>2</sup>	458.4	1,500	687,600
94	Արտաքին և ներքին բազրիքի իրականացում	մ <sup>2</sup>	90.0	25,000	2,249,000
95	Այլումինե ներկված մետաղական պանելներով երեսապատում ներառյալ օժանդակ կյուբերը	մ <sup>2</sup>	44.6	28,000	1,248,800
96	Պողպատե պանելներով COR-TEN երեսապատում ներառյալ օժանդակ կյուբերը	մ <sup>2</sup>	86.0	20,000	1,720,000
97	Փայտե երեսապատում ըմբշամարտի հարթակի կողերով	մ <sup>2</sup>	86.0	15,000	1,290,000
	<b>Տանիք</b>				
98	Տանիքի գոլորշամեկուսիչ շերտի իրականացում 1 շերտ	մ <sup>2</sup>	269.7	1,500	404,610
99	Տանիքի ջեմամեկուսացում թեթև բետոնով	մ <sup>3</sup>	9.02	45,000	405,900
100	Տանիքի հիմնաներկում	մ <sup>2</sup>	269.7	1,500	404,610
101	Ջեմամեկուսացում էքստրուդացված փոփոապոլիստիրոլով	մ <sup>2</sup>	269.7	5,500	1,483,570
102	Ջերմամեկուսացում հանքաքամքակով	մ <sup>3</sup>	68.4	2,500	170,950
103	Ջրամեկուսացում 2 շերտ բիտումային հիմքով ապակե գործվածք	մ <sup>2</sup>	269.7	2,000	539,480
104	Ջրամեկուսիչի իրականացում	մ <sup>2</sup>	1711.0	2,200	3,764,288

1	2	3	4	5	6
105	Ջրամեկուսիչ պաշպանիչի իրականացում	Վ2	269.700	2,500	674,250
106	Ցեմենտավազային հարթեցնող d=30մմ շերտի պատրաստում հատակների տակ	Վ2	269.7	2,000	539,480
107	Ամրանային ցանց	Վ2	269.7	1,300	350,662
108	Ցեմենտավազային հարթեցնող d=10մմ շերտի պատրաստում հատակների տակ	Վ2	269.7	1,500	404,610
109	Տանիքի իրականացում 0,6մմ հաստությամբ ցինկապատ թիթեղով	Վ2	1711.0	7,300	12,490,592
110	Ջրհորդանի իրականացում 0,5մմ հաստ գործարանային ներկածածկույթով թիթեղից - 215մ	Վ2	107.5	7,000	752,500
111	Ջրթող խողովակի իրականացում Φ140մմ, 8հատ, 8մ երկ	Վ	64.0	4,500	288,000
112	Ջրթող խողովակի իրականացում Φ120մմ, 4հատ, 4մ երկ	Վ	16.0	4,000	64,000
113	Զյուևապատնեշ 4,0մ երկարությամբ 36հատ	Վ2	72.0	8,000	576,000
	<b>Ընդամենը՝ ճարտարապետական մաս</b>				100,858,908

**4. Ջեռուցման համակարգ**

114	Պողպատե էլեկտրաեռակցված խողովակ Φ108x4 փորձարկումով	Վ	598.0	8,500	5,083,000
115	Պողպատե էլեկտրաեռակցված խողովակ Φ76x3 փորձարկումով	Վ	70.0	4,500	315,000
116	Պողպատե էլեկտրաեռակցված խողովակ Φ57x3 փորձարկումով	Վ	10.0	3,400	34,000
117	Պոլիարոպիլենե խողովակներ այլումինե շերտով տաք ջրի համար Φ63 PN20, փորձարկումով	Վ	17.0	7,000	119,000
118	Պոլիարոպիլենե խողովակներ այլումինե շերտով տաք ջրի համար Φ50 PN20, փորձարկումով	Վ	5.0	6,500	32,500
119	Պոլիարոպիլենե խողովակներ այլումինե շերտով տաք ջրի համար Φ32 PN20, փորձարկումով	Վ	5.0	3,500	17,500
120	Պոլիարոպիլենե խողովակներ այլումինե շերտով տաք ջրի համար Φ20 PN20, փորձարկումով	Վ	5.0	2,500	12,500
121	Պոլիարոպիլենե խողովակներ Φ63 PN20, փորձարկումով	Վ	166.0	7,000	1,162,000
122	Պոլիարոպիլենե խողովակներ Φ50 PN20, փորձարկումով	Վ	145.0	6,500	942,500
121	Պոլիարոպիլենե խողովակներ Φ40 PN20, փորձարկումով	Վ	85.0	4,500	382,500
122	Պոլիարոպիլենե խողովակներ Φ32 PN20, փորձարկումով	Վ	98.0	3,500	343,000
123	Պոլիարոպիլենե խողովակներ Φ25 PN20, փորձարկումով	Վ	152.0	2,600	395,200
124	Պոլիարոպիլենե խողովակներ Φ20 PN20, փորձարկումով	Վ	86.0	2,400	206,400
125	Պողպատե պանելային ջեռուցման մարտկոցների մոնտաժում ներառյալ օդահան, կախիչ, խցափակիչ 500x1500, 2,544վտ	կ-տ	7	100,000	700,000
126	Պողպատե պանելային ջեռուցման մարտկոցների մոնտաժում ներառյալ օդահան, կախիչ, խցափակիչ 500x1300, 2,084վտ	կ-տ	6	80,000	480,000
127	Պողպատե պանելային ջեռուցման մարտկոցների մոնտաժում ներառյալ օդահան, կախիչ, խցափակիչ 500x600, 1,084վտ	կ-տ	2	60,000	120,000
128	Պողպատե պանելային ջեռուցման մարտկոցների մոնտաժում ներառյալ օդահան, կախիչ, խցափակիչ 500x500, 0,844վտ	կ-տ	6	8,000	48,000

« 19 » 10

2022թ. կնքված N 33ԶԿ-ՅԲՄԱՇՁԲ-22/3 գնման պայմանագրի

1	2	3	4	5	6
129	Կափույր ջերամակարգավորիչ սարքի մոտ Φ15մմ - կետին	հատ	21	4,500	94,500
130	Կափույր ջերամակարգավորիչ սարքի մոտ Φ15մմ - կետին	հատ	21	4,000	84,000
131	Օդի բացթողման փական Մայելսկի Φ15	հատ	21	1,000	21,000
132	Օդի բացթողման փական Φ15	հատ	28	1,500	42,000
133	Ջեռուցման սարքի միացման կետեր	հատ	477	500	238,500
134	Սողնակային փական DN100, տեղադրումով	հատ	2	40,000	80,000
135	Սողնակային փական DN65, տեղադրումով	հատ	10	50,000	500,000
136	Փական DN50, տեղադրումով	հատ	8	10,000	80,000
137	Փական DN40, տեղադրումով	հատ	6	8,000	48,000
138	Չտիչ DN65, տեղադրումով	հատ	2	30,000	60,000
139	Չտիչ DN40, տեղադրումով	հատ	2	20,000	40,000
140	Դատարկման փական DN40, տեղադրումով	հատ	2	7,000	14,000
141	Ցանցի փորձարկում	մ	1442.0	100	144,200
142	Մետաղյա խողովակների երկշերտ յուղաներկում	մ <sup>2</sup>	221.0	1,200	265,200
143	Խողովակների մեկուսացում հանքային բամբակով 40մմ հաստ	մ <sup>3</sup>	0.28	50,000	14,000
144	Խողովակների փաթաթում ֆոլգայով	մ <sup>2</sup>	9.0	2,000	18,000
145	Խողովակների ամրացում պատերին	հատ	290	30	8,700
146	Բաշխիչ սանրիկ Φ200մ, L=1,0մ	հատ	2	50,000	100,000
147	Ջերմաչափ	հատ	2	6,000	12,000
148	Ճնշաչափ	հատ	2	7,000	14,000
149	Ջեռուցման սարքերի ապամոնտաժում 12 հատ	հատ	72.0	1,000	72,000
150	Պողպատե և մետաղալաստիկ խողովակների ապամոնտաժում	մ	780.0	400	312,000
151	Ֆիտինգների և ձևավոր մասերի ապամոնտաժում	հատ	460	150	69,000
	<b>Ընդամենը՝ ջեռուցման համակարգ</b>				12,724,200
<b>5. Օդափոխություն</b>					
152	Ջերմության ռեկուպերոցիոն ներածման և արտածման ագրեգատ L=3510մ <sup>3</sup> /ժ, P=370ՊԱ 1. Օդային կափույր LKSF 60-35/230 -1հատ 2. Օդային գտիչ KFD60-35 -1հատ 3. Ջրային օդատաքացուցիչ VO60-35/2R -1հատ 4. Ճկուն ներդիր DV 60-35 -2հատ 5. Ցածր ճնշման շառավղային օդամուղ RP-60-35/31-4D -1հատ 6. Չայնախլացուցիչ TKU60-35 -1հատ կամ համարժեք	կ-տ	1	2,800,000	2,800,000

« 19 » 10

2022թ. կնքված N 33ԲԿ-ՅԲՄԱԾԶԲ-22/3 գնման պայմանագրի

1	2	3	4	5	6
153	Ջերմության ռեկուպերացիոն ներածման և արտածման ազդերգատ L=6540մ3/ժ, P=370ՊԱ 1. Օդային կափուկոյր LKSF 80-50/230 -1հատ 2. Օդային զտիչ KFD80-50 -1հատ 3. Ջրային օդատաքացուցիչ VO 80-50/3R -1հատ 4. Ճկուն ներդիր DV 80-50 -2հատ 5. Ցածր ճնշման շառավղային օդամուղ RP-80-50/40-6D - 1հատ 6. Ձայնախլացուցիչ TKU80-50 -1հատ կամ համարժեք	կ-տ	2	4,088,000	8,176,000
154	Առանցքային օդամուղ L=11880մ3/ժամ P=425ՊԱ, 2455վտ տեղադրումով	հատ	1	200,000	200,000
155	Առանցքային օդամուղ L=420-450մ3/ժամ 35վտ տեղադրումով	հատ	2	65,000	130,000
156	Կանալային օդամուղ L=720մ3/ժամ 120վտ տեղադրումով	հատ	1	120,000	120,000
157	Կանալային օդամուղ L=110մ3/ժամ 130վտ տեղադրումով	հատ	1	130,000	130,000
158	Օդընդունիչ ճաղավանդակ 800x500	հատ	2	35,000	70,000
159	Օդընդունիչ ճաղավանդակ 600x350	հատ	1	28,000	28,000
160	Կարգավորիչ ճաղավանդակ 800x200	հատ	22	30,000	660,000
161	Կարգավորիչ ճաղավանդակ 150x150	հատ	5	7,000	35,000
162	Կարգավորիչ ճաղավանդակ 200x200	հատ	7	7,500	52,500
163	Կարգավորիչ ճաղավանդակ 400x200	հատ	4	9,000	36,000
164	Կարգավորիչ ճաղավանդակ 150x150	հատ	32	7,000	224,000
165	Կարգավորիչ ճաղավանդակ 200x200	հատ	3	7,500	22,500
166	Ձայնախլացուցիչ Ф400 L-1000	հատ	2	80,000	160,000
167	Ձայնախլացուցիչ Ф300 L-500	հատ	1	32,000	32,000
168	Ձայնախլացուցիչ Ф200 L-500	հատ	1	33,000	33,000
169	Օդատար ցիլինդրային թիթեղից d=0,7մմ տեղադրում ամրակապումով 1800x500 2,8մ	մ2	13	11,500	149,500
170	Օդատար ցիլինդրային թիթեղից d=0,7մմ տեղադրում ամրակապումով 1100x700 6,5մ	մ2	24	11,500	276,000
171	Օդատար ցիլինդրային թիթեղից d=0,7մմ տեղադրում ամրակապումով 1000x700 8,0մ	մ2	28	11,500	322,000
172	Օդատար ցիլինդրային թիթեղից d=0,7մմ տեղադրում ամրակապումով 900x700 30,0մ	մ2	75	11,500	862,500
173	Օդատար ցիլինդրային թիթեղից d=0,7մմ տեղադրում ամրակապումով 800x600 45,5մ	մ2	136.5	11,500	1,569,750
174	Օդատար ցիլինդրային թիթեղից d=0,7մմ տեղադրում ամրակապումով 800x200 56,0մ	մ2	123.2	11,500	1,416,800
175	Օդատար ցիլինդրային թիթեղից d=0,7մմ տեղադրում ամրակապումով 700x500 15,0մ	մ2	39	11,500	448,500
176	Օդատար ցիլինդրային թիթեղից d=0,7մմ տեղադրում ամրակապումով 600x500 12,0մ	մ2	29	11,500	333,500
177	Օդատար ցիլինդրային թիթեղից d=0,7մմ տեղադրում ամրակապումով 500x400 14,5մ	մ2	29	11,500	333,500

1	2	3	4	5	6
178	Օդատար ցինկապատ թիթեղից d=0,7մմ տեղադրում ամրակապումով 400x300 9,0մ	վ2	14.5	11,500	166,750
179	Օդատար ցինկապատ թիթեղից d=0,7մմ տեղադրում ամրակապումով 400x250 13,0մ	վ2	20	11,500	230,000
180	Օդատար ցինկապատ թիթեղից d=0,7մմ տեղադրում ամրակապումով 300x300 7,5մ	վ2	8.3	11,500	95,450
181	Օդատար ցինկապատ թիթեղից d=0,7մմ տեղադրում ամրակապումով 300x250 3,0մ	վ2	3.9	11,500	44,850
182	Օդատար ցինկապատ թիթեղից d=0,7մմ տեղադրում ամրակապումով 300x200 12,0մ	վ2	14.4	11,500	165,600
183	Օդատար ցինկապատ թիթեղից d=0,7մմ տեղադրում ամրակապումով 200x200 32,0մ	վ2	32	11,500	368,000
184	Օդատար ցինկապատ թիթեղից d=0,7մմ տեղադրում ամրակապումով 200x150 13,0մ	վ2	11.7	11,500	134,550
185	Օդատար ցինկապատ թիթեղից d=0,7մմ տեղադրում ամրակապումով 150x150 24,0մ	վ2	19.2	11,500	220,800
186	Օդատար ցինկապատ թիթեղից d=0,7մմ տեղադրում ամրակապումով Ф400 2,0մ	վ2	1.3	11,500	14,950
187	Գլխանոց օդատարի վրա, D=1000մմ, d=0,7մմ	հատ	1	12,000	12,000
188	Գլխանոց օդատարի վրա, 500x400մմ, d=0,7մմ	հատ	2	11,000	22,000
189	Գլխանոց օդատարի վրա, 350x350մմ, d=0,7մմ	հատ	2	9,000	18,000
190	Օդատարների մեկուսացում այլումիևե փայլաթիթեղով պատված հանքաբամբակով 40մմ հաստ	վ3	3.8	50,000	190,000
191	Օդատարի ամրացման կեռեր և լարեր	կգ	224	1,000	224,000
192	Զրային օդատաքացուցիչի ապամոնտաժում	կ-տ	2	5,000	10,000
193	Շառավղային օդամուղի ապամոնտաժում	հատ	1	10,000	10,000
194	Ցինկապատ օդատարի ապամոնտաժում	վ2	82	1,500	123,000
<b>Ընդամենը՝ Օդափոխություն</b>					20,671,000
<b>6.Ներքին սառը և տաք ջրամատակարարում, ներքին կոյուղի</b>					
<b>Սառը ջրամատակարարում</b>					
195	Պոլիպրոպիլենե խողովակներ de63x5,8 փորձարկումով	մ	59	8,000	472,000
196	Պոլիպրոպիլենե խողովակներ de32x3 փորձարկումով	մ	24	2,800	67,200
197	Պոլիպրոպիլենե խողովակներ de25x3 փորձարկումով	մ	28	2,200	61,600
198	Պոլիպրոպիլենե խողովակներ de20x1,9 փորձարկումով	մ	75	2,000	150,000
